

«ԿԱՐԳԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ»՝ ԴԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԱԴՐՈՒՅԹ

Լ.Դ. Շիրինյան
քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ազգի հարստությունը կախված է բազմաթիվ պատճառներից եւ ոչ միայն նյութական, այլև հոգեւոր բնույթի... ազգային հզորությունից, աշխարհագրական դիրքից, քաղաքական ու քաղաքացիական հաստատություններից, օրենքներից.

Կրոնից, բարոյականությունից եւ այլն:
Վիտտե¹

Նայաստանի Դանրապետության թե՛ ներքին կառուցվածքը, թե՛ արտաքին քաղաքականությունը կրում են երեք հիմնական գործոնի ազդեցությունը.

ա/ ՀՀ (+ Արցախի հանրապետություն) աշխարհագրական որոշակի տեղաբաշխվածությունը (Դայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան մասն է),

թ/ հայկական քաղաքակրթության առանձնահատկությունները (արևանդյան քաղաքակրթության անբաժան մասն է և այն ներկայացնում է Արևելքում, քաղաքակրթությունների հանդիպման և փոխգործության դիմամիկ գոտի է),

զ/ հայ ժողովողի արդի կեցությունը (աշխարհասփյուռ է և նրա փոքրամասնությունն է ապրում հայկական պետական կազմավորում-ներում ու Զավախքի ազգային տարածքում):

Յուրաքանչյուր գործոն, մասնավորապես առաջինը, իր ազեցությամբ պայմանավորում է պետական կազմավորումների առկա վիճակը, թելադրում նրանց առաջընթացի ռազմավարական նպատակները՝ ուժեղ օրգանական պետություն և սոցիալապես ուղղորդված տնտեսական համակարգ:

Բնական է, որ երկրաքաղաքական ակտիվ տեղաշարժերի գոտում գտնվող երկիրն իր սահմանափակ միջոցներով և պաշարներով չի կարող հավակնել տարածաշրջանային գերտերության կարգավիճակին,

սակայն համաշխարհային գարզացման փորձի և ազգային ինքնատիպության համադրման միջոցով կարող է ծառել զարգացման տարածաշրջանային օրենսդրի դերին: Ուրեմն, խնդիրը ուազմավարական նպատակների միշտ ընտրությունն է: Իսկ ուազմավարությունը, նշում էր հայտնի Կառլ Ֆոն Կլաուզեկիցը, չի կարող բանական հիմք ունենալ, քանի դեռ չի կառուցվել իր հետապնդած նպատակի գիտակցման վրա: Դիրավի, ունենալ ուազմավարություն, «նշանակում է, հստակ պատկերացնել զարգացման նպատակները և միշտ ընտրել նրանց իրականացման համար գործունեության ուղղությունները: Իսկ քաղաքական գործունեության նպատակները որոշվում են կախված այն հասարակության մասին պատկերացումներից, որի մեջ մենք ապրում ենք»²: Պարզ է, որ ընտրությունը պետք է ենթարկվի որոշակի պահանջների, այն է՝ պետական կառույցը պետք է բավարարի ժողովողի կազմակերպման լավագույն տարրերակին և ստեղծի ժողովորդի կարողությունների դրսնորման պայմաններ՝ մոտ լինելով նրա ինքնատիպությանը, վերարտադրի նրա ինքնությունը:

Որպես այդպիսին հանդես է գալիս «կարգի տեսության» հիման վրա նշակած և Արևմտյան Եվրոպայում՝ հատկապես Գերմանիայում, իրականություն դարձած «սոցիալական շուկայական տնտեսակարգը»:

Ժամանակին՝ ԽՍՀՄ լուժարմանը գուգընթաց, «ժողովրդավարություն» և «ազատականություն» կարգախոսներով տեղի էր ունենում զաղակարական ներքափանցում հետխորհրդային տարածք: Այն իրականում էր կոմունիզմի դեմ պայքարի գրավիչ դրոշով և ուներ հստակ արտահայտված հակասողիալիստական բովանդակություն:

Միջազգային իրադրության տեսանկյունից ժամանակը միշտ էր ընտրված, քանզի ներքափանցումը տեղի էր ունենում՝

ա/ Արևելյան դաշինքի գահավեժ փլուզման և խորհրդային քոնատիրությունից ժողովրդուների ազատագրման անկասելի մղման պայմաններում,

բ/ Խորհրդային Միության կազմալուծումը և Արևելյան Եվրոպայում «բավշյա հեղափոխությունները» տեղի էին ունենում Արևմուտքում պահպանողական արժեքների վերելքի հերքական շրջափուլի ուղեկցությամբ, սոցիալական շարժման ու սոցիալիստական գաղափարախոսության նահանջի, սոցիալ-տնտեսական ուժեղ ավանդույթներ ունեցող երկրներում (Ֆրանսիա, Գերմանիա և այլն) սոցիալիստների դիրքերի գգալի թուլացման պայմաններում:

Կոմունիզմի տեսությունն ու պրակտիկան ներկայացվում էին միակ սոցիալիստականը: Հընթացս խեղաքյուրվում էին կոմունիզմի և սոցիալիստական գաղափարախոսության միջև գոյություն ունեցող պատմափիլիսոփայական տարածայնությունների, քաղաքական ըմբռնումների, ներքաղաքական գործելաձևերի տարրերությունները: Որպես ձախեր համահարթեցման էին ենթարկվում սոցիալիստները, սոցիալ-դեմոկրատները, կոմունիստները:

Անդրադառնալով սոցիալիստական շարժման շուրջ 1,5-դարյա պատմությանը կնկատենք, որ սոցիալիստական գարգացումը, անցնելով հեղափոխական մարքսիզմի փուլը, թեքվել է հիմնականում բարեշրջական (ռեֆորմիստական) ռազմավարություն՝ դադարելով սոցիալիզմը դիտել որպես որոշակի մոռել իրեն հատուկ հատկանիշներով և հակվել այն տեսակետին, որ գոյություն ունեցող կարգերի շրջանակում ժողովրդավարության պայմաններում և ժողովրդավարական մերույներով, անհրաժեշտ է կատարելագործել հասարակական հարաբերությունները:

Նրանք, ովքեր մերժում էին այդպիսի մոտեցումը, սոցիալ-դեմոկրատիայից դուրս եկան, հատկապես Առաջին աշխարհամարտից հետո, և ստեղծեցին կոմունիստական կուսակցություններ: Իսկ ովքեր համարում էին, որ կարելի է զնալ դեպի սոցիալիզմ որպես ինչ-որ մոռել, սակայն հիմնականում խաղաղ, բարեշրջական մերույներով, գերադասեցին իրենց անվանել սոցիալիստներ: Արանց մեջ առաջին հերթին պետք է նկատի ունենալ Ֆրանսիայի սոցիալիստներին:

Սակայն վերջին տարիներին սոցիալիստների ու սոցիալ-դեմոկրատների միջև գոյություն ունեցող տարրերությունները ջնջվում են: Նրանք բոլորը թեքվում են դեպի սոցիալ-լիբերալ պլատֆորմ: Դատկանշական է, որ գրեթե բոլորն էլ միևնույն դիրքերում են՝ ժողովրդավարություն, սոցիալական և իրավական պետություն, գործունեության բարեշրջական մերույներ, կողմնորոշում դեպի հասարակական հարաբերությունների հումանիստականացում:

Նույնիսկ Եվրոպական կոմունիստական կուսակցությունները, ըստ եռարյան, աննշան վերապահումներով, ընդունեցին խորհրդարանական ժողովրդավարության սկզբունքները և լույսայն հանձնայնեցին սոցիալական շուկայական տնտեսության իրողություններին: Իսկ Եվրոպական սոցիալ-դեմոկրատները, հարմարվելով արդյունաբերական երկրների նոր զարգացումներին, հաշվի առնելով արագ փոփոխվող

պայմանները, սկսեցին շրջվել դեպի սոցիալական ազատականության դիրքեր՝ XX դարի վերջին տասնամյակի երկրորդ կեսերին քաղաքական իշխանության ոլորտում նորից վերադարձնելով կորցրածը:

Սոցիալստական շարժման դասական հայրենիքը՝ Եվրոպան, XXI դար թևակոխոց սոցիալ-դեմոկրատական «կողմնորոշում» ունեցող երկրների (Ֆրանսիա, Անգլիա, Գերմանիա) գլխավորությամբ: Եվրախորհրդարանում Սոցինտերնը, ունենալով պատգամավորական խոշորագույն խմբակցություններից մեկը, քվեարկում է հավաքական կարգապահության սկզբունքով:

Եթե նկատի ունենանք ՀՀ տնտեսատեխնիկական ընդհանուր քայլավածությունը և միաժամանակ աշխատավորական շարժման գործեր իսպառ բացակայությունը, ՀՀ ներքին գաղօգացումը պահանջում է քաղաքական պայքարի գործելաձևի ճիշտ ընտրություն:

Նորանկախ Հայաստանի բազմարիվ ու բազմարնույթ դժվարությունների պատճառների թվում առաջինը, թերևս, տնտեսական հարաբերությունների ոլորտում արմատական հեղաշրջումն էր: Մինչդեռ տնտեսական հարաբերությունների ոլորտն էր, առաջին հերթին, պահանջում ծրագրված բարեփոխումների քաղաքականություն և հանրապետության գարգացման հստակ հայեցակարգ:

Որպես արդյունք՝ ստեղծվեց մենաշնորհայնացված հասարակություն, որը նույնիսկ չի նպաստում «արդյունաբերական ազգային բուրժուազիայի» կայացմանը:

Ստեղծված կացությունը, այդուհանդերձ, ուղղել հնարավոր է: Այն կապված է արդիականացման (մոդեռնեցիա) քարաքականության որդեգրման հետ՝ առաջին հերթին իընթաց ուղղորդելով տնտեսական փիլիսոփայության³ հայեցակարգը:

Մեզանում, թերևս, հասարակական, պետական կյանքի կազմակերպման, ազգային տնտեսության մոդելի վերջնական ընտրությունը պետք է կատարվի գոյություն ունեցող երկու հիմնական տիպերի միջև:

Առաջինը՝ այսպես կոչված ամերիկյան տիպն է, որը իրականացել է դասական տնտեսական ազատականության հայեցակարգով: Այստեղ պետության դերը հասարակության տնտեսական ու սոցիալական հարաբերությունների ոլորտում, ճիշտ է, ընդունվում է, սակայն այդպիսի կարգավորմանը ավանդականորեն հատկացվում է ավելի համեստ դեր, քան ինքնագործ տնտեսական սուբյեկտներին (ենթականերին):

Ակնհայտ է, որ ԴՆ տնտեսական քաղաքականությունը մինչև օրս, որպես իշխող միտում, ունեցել է ամերիկյան ուղղություն, թեկուզ և իրական կյանքում այն անճանաչելիորեն ձևախեղվել է:

Երկրորդ «Սոցիալական շուկայական տնտեսության» կարգն է, որը դիտվում է որպես եվրոպական ուղղություն: Այս տիպը գերիշխում է Արևմտյան Եվրոպայում: Այստեղ տնտեսավարման կառուցակարգը չի պատկերացվում այլ կերպ, քան սոցիալապես ուղղորդված: Այլ կերպ՝ սոցիալական խնդիրը ներակա (ինպիհիտ) է տվյալ պետական-տնտեսական կառույցին:

Տվյալ հայեցակարգն իր երթամբ «ազատ շուկայական տնտեսության» ազատական մոդելի տարատեսակն է՝ դրան հատուկ հատկանիշերով՝ անհատական ազատությունների երաշխավորվածություն և մասնավոր սեփականության իրավունք, տնտեսական վճիռների կայացման ապակենտրոնացում, ազատ գնագոյացում և ազատ մրցակցություն, ներքին շուկայի բացվածություն: «Սոցիալական շուկայական տնտեսություն» հասկացության հեղինակ Ալֆրեդ Մյուլեր-Արմակը տվյալ տնտեսության հնաստղ տեսնում էր շուկայի սկզբունքի՝ սոցիալական հավասարեցման սկզբունքի հետ գուգակցման մեջ, իսկ նպատակը՝ մրցակցային տնտեսության բազայի վրա ազատ նախաձեռնությունը սոցիալական առաջընթացի հետ կապելու մեջ՝ ապահովված հատկապես շուկայական տնտեսական նվաճումներով: Ընդունին, Ա. Մյուլեր-Արմանը հնարավոր էր համարում սոցիալական խնդիրների լուծումը ազատ մրցակցության շրջանակներում:⁴

Ընդունին «սոցիալական շուկայական տնտեսության» ներկայացուցիչները, ի տարրերություն դասական ազատականության ներկայացուցիչների, չեն ընդունում պետության ինքնարացարեկ՝ տնտեսական և սոցիալական հարցերում: Օրինակ, գերմանական տնտեսական հրաշքի հայր Լյուդվիգ Էրիարդը համարում էր, որ պետությունը պատասխանատվություն է կրում տնտեսական քաղաքականության հետևանքների համար, կայուն իրավիճակի պահպաննան և տնտեսական վերելքի ապահովման համար: Նա պատասխանատու է ազգային տնտեսության մրցունակության և համաշխարհային տնտեսության հետ օրգանական համարկման (ինտեգրման) համար: Ավելին, տնտեսական կյանքում կարգավորիչ, պլանային սկզբունքը պետության ակտիվ դերի հետ միասին, ըստ Լ. Էրիարդի, այսօր ցանկացած համակարգի անբաժան մասն է:

Մեզ համար տնտեսական համակարգի ընտրությունը ինքնանպատակ լինել չի կարող: Այն պետք է բավարարի առնվազն երկու պահանջ:

ա/ ունենալ ինքնազարգացման ներքին կարողականություն (պոտենցիալ):

բ/ ենթադրի սոցիալական⁵ խնդրի լուծման ինարավորություններ:

Եթե նկատի ունենանք եվրոպական տնտեսական համակարգի հաջողությունների օրինակը, ինչպես նաև Արևելյան դաշինքի տնտեսական ծախողնան պատճությունը, իսկ տվյալ դեպքում էական է համաշխարհային փորձը, կտեսնենք, որ ազատության ու մրցունակության սկզբունքների վրա կառուցված հասարակարգը առավել չափերով է ազատագրում մարդու ստեղծագործական ներուժն ու նախաձեռնությունը: Որտեղ մրցունակության հանդեպ ոտնձգությունը ոտնձգությունը է ազատության դեմ: Զաղաքականության մեջ այն հանգեցնում է ամբողջատիրության (տոտալիտարիզմի), տնտեսության մեջ՝ հենց ձեռներեցության ազատության սկզբունքի ոչնչացման ու հրանայակարչական համակարգի վերակենդանացման:

Լ.էրիարդն ընդգծում էր, որ ինքնահաստատման անհրաժեշտությունը հատուկ է շուկային: Մրցունակության հատկապես այդ ոգին է, որ ապահովում է տնտեսական առաջադիմությունը և գլխավորապես սպառողին, այսինքն՝ ողջ ժողովրդին թույլ է տալիս օգտվել աշխատանքի ավելի բարձր արտադրողականության պահուղմերից: Այստեղից տրամարանորեն հետևում է, որ շուկայական տնտեսության ավելի բարձր արդյունավետությունը թույլ է տալիս հասնել պահանջմունքների (քանակի, որակի և գների մակարդակի տեսանկյունից) առավելագույն նպաստավոր բավարարմանը: Նկատի ունենալով Արևմտյան Գերմանիայի տնտեսական իրավանությունը՝ Լ.էրիարդը նշում էր, որ ելնելով այդ գործառությային փոխվառագությունից՝ Գերմանիայի տնտեսական քաղաքականությունը կոչվում է նաև «սոցիալական շուկայական տնտեսություն»:

Ինքնին հասկանալի է, որ ոչ միայն շուկան, այլև ինքը՝ տնտեսությունը և նրա արդյունավետությունը ինքնանպատակ արժեքներ չեն: Նպատակը մարդուն ազատագրելը է, նրա ներուժին (պոտենցիալին) ու նախաձեռնությանը ճանապարհ բացելը, մարդու արժանապատիկ գոյության ապահովումը, նրա ոչ միայն նյութական, այլև հոգևոր պահանջմունքների առավելագույն բավարարումը: Այս տեսանկյունից է,

որ կարելի է գնահատել տնտեսական ցանկացած համակարգի իսկական իմաստն ու գոյության արդարացումը:

Ավելին, տնտեսական ու սոցիալական առաջընթացը (այս եզրակացությանն է հանգել նաև արդի սոցիալիստական շարժումը) կապված չէ սեփականության որոշակի ծևի հետ: Այն կախված է արտադրական անկախ միավորների ազատ մրցակցությունից, առհասարակ մարդու ազատությունից, ինչը, սակայն, հնարավոր չէ կազմակերպել առանց պետության: «Սոցիալական շուկայական տնտեսության» հայեցակարգում, ստուգ՝ «օրդոլիբերալիզմի»⁶ կանխադրույթներում ընդգծվում է ուժեղ ու արդիական պետության անհրաժեշտությունը: Պատահական չէ, որ այս ուղղության տեսական մշակումները տեղափորվում են «սոցիալական շուկայական տնտեսության» հոգևոր հայր Վալտեր Օյկենի «տնտեսական կարգի» (Wirtschaftsordnung) շրջանակներում:

Օրոյլիբերալիզմը, գնահատելով ազատ մրցակցության դերը հասարակության տնտեսական առաջընթացի մեջ, միաժամանակ ցույց է տալիս «հիմն» ազատականության հիմնական սխալը՝ այն, որ նա հաշվի չի առնում ազատ շուկայի մենաշնորհներ (մոնոպոլիաներ) ժնելու վտանգները, և ական նշանակություն չի տալիս ոչնչով չսահմանափակված մրցակցության ժնած սոցիալական խնդիրներին: Եվ հաշվի առնելով այս և մյուս էական սխալները, որոնք ժնում է դասական ազատականության վրա կառուցված տնտեսական քաղաքականությունը, «գլխավոր օրոյլիբերալիստ» դոկտոր Վալտեր Օյկենը 30-ական թվականների կեսերին մշակեց սոցիալական շուկայական տնտեսության մոդելի հիմնական սկզբունքները: Դրանցից գլխավորներն են.

- գնագոյացման ազատություն և դրանաշրջանառության կայունություն,

- մրցակցություն՝ առանց մենաշնորհների և մասնավոր սեփականության անխախտություն,

- տնտեսական ինքնուրույնություն և ծեռնարկատերերի պատասխանատվություն,

- պետության սահմանափակ տնտեսական դեր⁷:

«Հիշյալ դպրոցի ներկայացուցիչները,- գրում է պրոֆ. Վիկոր Վանբերգը,- համոզված են, որ տնտեսական առողջ քաղաքականությունը պետք է լինի առաջին հերթին կարգի քաղաքականություն՝ ուղղված իրավական ու ինստիտուցիոնալ կառուցվածքների ստեղծմանը»⁸:

Այդ տեսության հիմնաղիրները սոցիալական շուկայական տնտեսությունը դիտում էին որպես տնտեսական, սոցիալական և քաղաքական կարգ՝ առանձնացնելով հատկապես սոցիալական քաղաքականությունը, դրա յուրաքանչյուր դրսնորումով որպես շուկայի ազատության երկարաժամկետ երաշխավորի⁹:

Օրդուիրերալիզմի տեսանկյունից պետությունն ինքը պետք է գիտակցաբար որոշի տնտեսակարգի շրջանակները՝ ահազանգելով հասարակության մեջ բացասական միտումների առաջացման մասին: Նա պարտավոր է միջամտել տնտեսական գործունեությանը, որ ապահովեն մրցակցության նախադրյալները, և հետևի հաստատված «խաղի կանոններին»:

Պետության դերը, ըստ օրդուիրերալիզմերի, հանգում է ֆուտորլային իրավաբարի գործառույթին, «որի խնդիրը չէ, որ ինքը խաղա, և ոչ էլ այն, որ բոլոր խաղացողներին հուչի նրանց բոլոր շարժումները, այլ այն, որ անարգել երաշխավորի բոլոր կանոնների պահպանումը: Դա էլ այն պետությունն է, առանց որի իսկական շուկայական տնտեսությունը գոյություն ունենալ չի կարող»¹⁰:

«Ալորի, իր պատասխանատվությունը գիտակցող պետությունը, - ավելացնում է Լ. Երիարդը. - չի կարող իրեն թույլ տալ հանգելու գիշերային պահակի ներին»: «Ես փորձում եմ, - ընդգծում էր նա, - շուկայական տնտեսության քաղաքականության միջոցով մշակել նրա կարգը՝ դրան անհրաժեշտ խաղի կանոններով»¹¹:

Օրդուիրերալիզմը հանդիս է զալիս առանձին անհատների ու տնտեսավարող սուբյեկտների տնտեսական շահերի նկատմամբ հասարակական շահերի գերակայությունից, հասարակական տարրեր շերտերի ներդաշնակ համակեցության հրամայականից, «կապիտալիստների» ու «քանվորների» «սոցիալական գործընկերության» անհրաժեշտությունից: Գերմանացի Յ. Սեղմիլուտը հստակեցնում է խնդրակարգը նշելով, որ «սոցիալական շուկայական տնտեսությունը» ազատ շուկայական տնտեսության դասական սկզբունքից տարբերվում է «չորս գլխավոր կետերություն»:

Այդ տարբերություններն են.

արդյունավետ մրցակցությունը ինքնին տրված բան չէ, այլ սահմանվում է պետության ակտիվ մրցակցային քաղաքականությամբ,

շուկայով սահմանված եկամուտների բաշխումը շտկվում (կարգավորվում) է եկամուտների հետագա վերաբաշխումով.

պետությունը վարում է ակտիվ իրավիճակային (կոնյուկտուրային) քաղաքականություն՝ նպատակ ունենալով (դնելով) հասնել լրիվ զբաղվածության, գների կայունության և վճարային հաշվեկշողի հավասարակշռության,

բացի Եկամստների վերաբաշխությունից՝ նախատեսվում է նաև ներգործություն ունեցվածքի գոյացման վրա, որի ծեղոք բերման մեջ պետք է ընդգրկվեն ազգաբնակչության լայն զանգվածները:¹²

Ավելորդ չենկատելը, որ հիշյալ «հրամայականը» հայ քաղաքական նիտքը սկսել է յուրացնել դեռևս XX դարի առաջին տասնամյակներից: Այսպես, ներազգային խնդիրների հարցում, պատմական այլ պայմաններում, նույն դիրքորոշումն ուներ նաև Նիկոլ Ռումանը դեռևս 1907 թվականին, ԴՅ Ղաշնակցության Չորրորդ Ընդհանուր ժողովին (1907 թ.) հղած դիմումով ժողովից պահանջում էր պաշտպանել հայ քանվորության շահերը՝ միաժամանակ թույլ չտալով սպանել հայ արդյունաբերությունը, իսկ «դասակարգային» հակամարտությունը պահել «փափոկ սահմանների» մեջ՝¹³: Նույն տեսակետում էր պաշտպանում, ըստ Եւրյան, հայ ազգատական հոսանքը՝ նրա տիպական ներկայացուցիչ Ալ. Արախանյանը¹⁴: Հանգի Ֆրիդրիխ Լիստի հեղինակավոր հաստատումով, «ազգային միասնությունն այն ժայռն է, որի վրա պետք է հենվի նրա բարեկեցությունը, հարգանքի հզորության շենքը, նրա առկա ապահովվածությունն ու գոյությունը, զալիքի վեհությունը»¹⁵:

Ուստի պետությունը պարտավոր է ընդունել այնպիսի օրենքներ ու որոշումներ, որոնք հասարակությանն ու առանձին անհատներին պաշտպանում են անքարեխիղն մրցակցությունից, կարգավիրում են մրցակցային պայքարի սահմանափակումները: Պետությունը, համաձայն օրդոլիբերալների, պարտավոր է կարգավորել սոցիալական ոլորտը, պաշտպանել հաշմանդամների ու մայրության, ծերերի ու երիտասարդության իրավունքները, երաշխավորել սեփականության իրավունքի գործադրումը, ապահովել թժկվելու և այլ իրավունքներ:

Տեղին է նկատել, որ դեռևս XIX դարի 70-ական թվականներին գերմանական նոր պատմական դպրոցի ներկայացուցիչները (Բ. Շիլդերը և այլք, Գ. Շմոլեր, Վ. Չոմբարտ) առաջարում էին հասարակության մեջ սոցիալական արդարության սկզբունքը արմատավորելու գործում պետության ակտիվ միջանտության անհրաժեշտության խնդիրը: Թեպետ օրդոլիբերալիզմը առաջնությունը վերապահում է անհատական նախաձեռնությանը, այդուհանդերձ՝ ընդգծում է, որ հասարակական

կյանքում եսամոլ շահը չպետք է սանձարձակության հասնի: Այն պետք է ենթարկվի հստակ սահմանափակումների: Ընդ որում, մրցակցությունը խրանգում է, իսկ շահույթի աճը ծեռք է բերվում առաջին հերթին իրավական ուժեղ շրջանակների հաստատումով, որն էլ սահմանափակում է տնտեսության մենաշնորհայնացումը, «անմարդուր մրցակցությունն» առհասարակ: Դայաստանի Դանրապետության մենաշնորհայնացված տնտեսության վիճակի արմատական բարեփոխման տեսանկյունից բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում կարծի «հակակարտելային օրենքի» ընդունման ու կիրառման փորձը Գերմանիայում: Այս օրենքը Լ. Էրիհարդ համարում էր «սոցիալական շուկայական տնտեսության» իր զնրոնումների «միջուկը»¹⁶:

Ավելին, պետությունը, սոցիալական շուկայական տնտեսակարգում իրականացնելով կարգավորում, կոչված է առանձին անհատների եսասիրությունը ուղղորդել ընդհանուր բարօրության հուն: «Սոցիալական շուկայական տնտեսության հայեցակարգի կենտրոնում, գրում է Լ.Լ.Վասինան,- գտնվել է անհատական ազատությունն ու պատասխանատվությունը: Կարգի պետական քաղաքականության խնդիրը սոցիալական շուկայական տնտեսության մեջ ազատության, կարգի, անհատապաշտության և կոլեկտիվիզմի միավորումն է ներդաշնակ միասնության մեջ «բարեկեցություն բոլորի համար» ծեռք բերելու նպատակով»:¹⁷

Այսպիսով, տնտեսական արդար կարգը և տարբեր «խմբային շահերի» համաձայնեցումը, դրանց հաշվեկշոր պահպանումը կարող է ապահովել միայն պետությունը, եթե ծիչու է որոշում իր դերն ու խնդիրները:

Առաջին, պետությունը պարտավոր է սահմանել խաղի պարզ, միասնական և արդար կանոններ, որոնք քոյլ չեն տա արտոնություններ, ոչ էլ խտրականություն:

Երկրորդ, պետության խնդիրն է հետևել, որպեսզի այդ կանոնները պահպանվեն խաղի բոլոր մասնակիցների կողմից:

Երրորդ, պետությունն ինքը չպետք է միջամտի խաղին: Նրա գործառությը անկողմնակալ իրավարարի դերն է, որը սրբազրում է խաղացողների վարքագիծը դաշտում համաձայն մշակված կանոնների:

Չորրորդ, նրանց համար, ովքեր (տարիքի), հիվանդության կամ այլ պատճառներով) ի վիճակի չեն մասնակցել մրցակցությանը, պետությունը պահպանում է այդ պահանջմանը:

յունը պարտավոր է ապահովել սոցիալական պաշտպանության անհրաժեշտ նվազագույնը:

Առաջնային հետաքրքրություն է ներկայացնում «սոցիալական շուկայական տնտեսության» ընդգծված ծգությունը՝ լուծել ոչ միայն տնտեսական, այլև սոցիալ-քաղաքական խնդիրները: Հայն առօնով այն ուղղված է մարդուն, նրա ազատությանը, սոցիալական պաշտպանվածությանը: Նույն Լ. Էրիարդը գտնում էր, որ «սոցիալական շուկայական տնտեսության» համակարգի արդյունավետությունն ու արդարության զիսալիոր չափանիշը ոչ թե ծեռնարկատերերի շահույթների չափերն են, այլ այն առավելությունները, որոնք ստանում են սպառողները: Սի հայեցակարգ, որը ճանապարհ է բացում դեպի ազատ, տնտեսապես արդյունավետ, ինքնազարգացող կայուն հասարակություն¹⁸:

Դասական ազատականության նախկին քաղաքականության հանդեպ տնտեսության առաջնության կանխադրույթին օրդուլիրերակաները հակադրում են տնտեսության նկատմամբ քաղաքականության ու պետության առաջնության տեսակետը: Ընդունին, պետության միջամտության նպատակը տնտեսության ոլորտում սահմանափակվում է «գործունակ շուկայական տնտեսությանը» օժանդակելով, իսկ միջամտության միջոցները՝ «շուկայականի» շրջանակներով: Այլ կերպ պետությանը հնարավորություն է տրվում «տնտեսական գործընթացի» վրա ազդել միայն դրամավարկային քաղաքականության լծակներով:

Իհարկե, քննվող սոցիալական շուկայական տնտեսակարգը բացմարնույթ է և նայաստանի հանրապետության համար ուսանելի: Ուսանելի՝ նաև այն պատճառով, որ տվյալ հայեցակարգը թույլ է տալիս, կարծում ենք, ներդաշնակության եզրեր գտնել հասարակական-տնտեսական կարգի և, տվյալ դեպքում, հայոց ինքնատիպության միջև, այն ծառայեցնել ժողովրդի բարոյական ու հոգևոր վերածննդին: Եվ այդ ինաստով անհրաժեշտ է «ազգայնացնել» այն: Առավել ևս, որ այն «ներծծված» է քրիստոնեության սոցիալական դավանանքի երկու անձի և փոխարկելիության (սցումարիության) հիմնական սկզբունքներով:

Առաջինը պետության ուշադրության կենտրոն է մոլում մարդուն նրան վերածելով տնտեսական ու հասարակական գործունեության չափանիշի: Եվ այդքանով հաղթահարում է ծայրահեղացված էտասիզը (ֆրանսաբերեն etat-պետություն): Երկրորդն, ըստ եռթյան, ծառայում է ընդունվող ընդհանուր որոշումների ապակենտրոնացմանը՝ ա-

ռավելագույն ինքնուրույնություն և նախաձեռնություն վերապահելով հասարակական կյանքի կազմակերպման ստորին օդակներին, յուրօրինակ անտես սահման դառնալով տնտեսական գործունեության պետական կարգավորման ու սոցիալական հարաբերությունների միջև՝ ապահովելով առավելագույն ճկունություն առանձին տնտեսական ենթակաների (սուբյեկտների) ու նրանց միավորումների, նաև պետական կառուցների ու գործառույթների միջև:

Սոցիալական շուկայական տնտեսության հայեցակարգը և դրանից բխող գործնական քաղաքականությունը, արտահայտելով ժողովրդի հիմնական զանգվածի և ազգային կապիտալի կենսական շահերը, կարող են հանդես գալ իրեն իրական այլընտրանք գոյություն ունեցող համակարգին, կարող են ՀՀ տնտեսական եւ քաղաքական նպատակների ուղղմավարությունը ուղղողդել տնտեսական ժամանակաշրջանով: Եթե, անշուշտ, պահպանվի իրական վերափոխումների այն մերոդարձությունը (նարտավարությունը), որն անցել է գործնական քաղաքականության փուլով Արևածագը և Երևանում: Նույն Լ. Երիարդը, նկատի ունենալով Գերմանիայի անցման շրջանի քաղմարովանդակ կյանքը, գտնում էր, որ համապատասխան քաղաքականության արդյունավետության համար, այն պետք է հասկանալի լինի քաղաքացիներին, համոզի նրանց իր ծշնարտացիությամբ, լինի հետևողական, քանզի անհետևողական, տատանումներով վարկող քաղաքականությունը վատթարագույնն է: Նա պետք է լինի բաց ու ազնիվ և ի վերջո մարտավարորեն (տակտիկանես) ճիշտ կառուցվի, ուստի և կողմնորոշվի ոչ միայն երկարաժամկետ վերջնական արդյունքներին, այլև բնակչության ժամանակային ակնկալիքների տեսակետից լինի համոզիչ՝ ցուցադրական արդյունավետ տպավորություններով¹⁹:

Անտարակույս սոցիալական շուկայական տնտեսության սկզբունքներով ստեղծված ՀՀ ազգային տնտեսության համալիրը «կրավարարի» ՀՀ գալիքով շահագրգիռ շերտերին, որոնց թվում՝ ինչպես «աշխատավոր ընդհանրությանը», այնպես էլ մտավորականությանն ու արդյունաբերող դասակարգին: Այն կիամադրի ավանդականությունն ու երկրի քաղաքական-տնտեսական արդիականացումը: Այլ կերպ՝ ծեռք կրերվի լայն արդիականացում՝ ազգային ավանդույթների «վերակազմության» միջոցով:

Ուսանելի է Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության տնտեսական պլատֆորմի «ճշգրտման» փորձը՝ «Գոդեսբերգյան ծրագ-

րի» (1959թ.) ընդունումից հետո, երբ տեղի ունեցավ նրա տնտեսական պլատֆորմի մերձեցումը «Սոցիալական շուկայական տնտեսության» հայեցակարգին: Այն արտահայտվեց ոչ միայն «մրցակցություն» որքան հնարավոր է, պլանավորում որքան անհրաժեշտ է» ծրագրային դրույթով, այլև այն բանով, որ գալով իշխանության նրանք ոչ միայն չկարողացան, այլև նույնիսկ չուզեցին արմատապես փոխել տնտեսության կարգավորման գոյություն ունեցող, ըստ էռերյան, երկարոյան համակարգը: Իսկ Գերմանիան դրանից շահեց: Ուշագրավ է նաև Դարավային Կովկասի երկրների զարգացման առաջնահերթությունների ընտրության մասին և. Ծմելովի առաջարկների համալիրը: Դրանք են.

- ագրարային սեկտորի արագացված զարգացում՝ դրա արմատական բարեփոխման ճանապարհով,
- այդ երկրների վերածումը մշակող գլոբալ արդյունաբերության «հավաքման հրապարակի»,
- սեփական բնական էներգետիկ պաշարների ինտենսիվ շահագործում,
- մասնագիտացում տարանցիկ առևտորային և տրանսպորտային ծառայությունների մեջ:

«Առաջանցիկ» ամենահաջողված երկրներն իրենց տնտեսական ուազմակարության մեջ համակցել են տվյալ չորս ուղղությունները²⁰:

ՀՀ-ում ընթացող ներքին գործնթացները, ժողովրդի «աշխատավոր գանգվածի» հիմքափությունը, ՀՀ հասարակական-քաղաքական զարգացումը մղում են ծախս-կենտրոն: Սոցիալական արդարության հանդեպ հակումներ դրսևորող ժողովուրդը, թերևս, կանի իր ընտրությունը, իսկ Արևելք-Արևմուտք երկրագաղաքական խաչմերուկում գտնվող հանրապետությունը կզարգանա, նշակութային երկխոսության «դաշտում» գտնվող հայկական քաղաքակրթությունը կարծանագորի իր առաջննթացը, Եվրոպական ուղղորդում դրսևորող երկիրը կշահի, եթե XXI դարը ՀՀ համար դառնա «կարգի տեսության» հասարակություն:

Եվ դրանով ՀՀ-ն կգրադեցնի քաղաքակրթական իր տեղը տարածաշրջանում ու ժողովուրդների համաշխարհային ընկերակցության մեջ: Դարաշարժ ու անընդմեջ արդիականացող ՀՀ-ն կստանա հնարավորություն իրականություն դարձնելու հավասարակշռության երաշ-

խավորի գործառույթ նույն տարածաշրջանում, որի սլաքները կուղ-դորդվեն Մերձավոր և Միջին Արևելք:

Ծանոթագրություններ՝

1. Вигте С.Ю., По новоду национализма. Национальная экономия и Фридрих Лист, 2-е изд., СПб, 1912, էջ 51-52.
2. Семина Л. (беседа), «Коллеса Тихомирова».-«Диалог» (Москва), 1990, №3, էջ 37.
3. Տնտեսության փիլիսոփայություն տնտեսության դիտարկումը փիլիսոփայության տեսանկյունից, ինչն ընդգրկում է տնտեսական գործողի արժեքային համակարգի իրու մշակույթի բաղադրամասային և համընդիանուր աշխարհայցքային սկզբունքների ամրողությունը:
4. Müller-Ättwak A. Wirtschaftsordnung und Wirtschaftspolitik. Freiburg, 1966: Տե՛ս Երեցը Շ.Ա. Կրիտика буржуазных учений об экономической системе современного капитализма. М., 1972, էջ 217-218:
5. Սոցիալական (լատ. socialis)՝ ընդհանուր, հասարակական, ողջ միջմարդկայինի անվանումը, այսինքն այն ամենի, ինչը կապված է մարդկանց համատեղ կյանքի հետ, առաջին հերթին նրա, ինչը վերաբերում է հասարակությանն ու ընդհանությանը, ինչն ունի հասարակական ու ընդհանրական բնույթ:
6. Օրդոլիբերալիզմի գաղափարները ամփոփված են «սոցիալական շուկայական տնտեսության» «soziale Marktwirtschaft» («Social Market Economy») հայեցակարգում, որի մերողաբանական հիմքը «կարգի տեսությունն» (Ordnungstheorie) է: Ծագում է «ORDO» (լատ. կարգ) անսագրի անվանումից: Դասկացությունը առաջին անգամ օգտագործել է գերմանացի գիտնական Ալֆրեդ Մյուլլեր-Արնակը 1948 թ. (տե՛ս «ORDO», Bd. 1, 1948, S. 125; Gesellschaft und Staat. Lexikon der Politik, München, 1992, S. 658-659): Այն կոչված էր երկրորդ աշխարհամարտից հետո արևմտյան պետությունների զավթած գոտում նախանշել, որ պես ծկուն տնտեսական տեսություն, Արևմտյան Գերմանիայի տնտեսական, հասարակական-քաղաքական գարգացումը ապահովելով ազատություն, արդարություն և քարեկեցություն բոլորի համար:

ORDO հասկացության կիրառությունը խորհրդանշական է: Այն որոշակի երանգ է հաղորդում ֆրայբուրգյան ռապորտի գիտական հարցադրումներին՝ ընդգծելով պետության կարգավորիչ գործառույթը: Ավելին, «սոցիալական շուկայական տնտեսակարգը» դոկտոր Վալտեր Օյկենը անվանում է նաև մրցակցակարգ (Wettbewerbsordnung): Ordoliberalizmus (Neoliberalizmus) ընդգծում է հատկապես ֆրայբուրգյան դպրոցի ներկայացուցիչների հայացքների առանձնահատկությունը, նրանց հրաժարումը «նաքուր» ազատականությունից:

Արևմտյան Գերմանիայի վերածնունդը իրականացավ «սոցիալական շուկայական տնտեսության» մշակած սկզբունքներով հայտնի օրդոլիերալիստ Լյուդվիգ Էրհարդի ղեկավարությամբ: Այն պատմության մեջ մտավ գերմանական «տնտեսական իրաշը» անվամբ: (Մանրանասն տես Զարյան Բ. Ե., Լյուդվիգ Էրհարդ: սեքրետы "экономического чуда". М., 1997): Օրդոլիերալիզմը տեսական երկրորդ ծնունդ ապրեց անցյալ դարի 80-ականներից հետո, Արևելյան Եվրոպայի երկրներում, ինչպես նաև Ուստաստանում, որոնք, այդ թվում՝ Դայաստանի Դանրապետությունը, անցնում էին Վարչականացականից (հետպատերազմյան Գերմանիայի նման) շուկայական համակարգի: Օրդոլիերալիզմը բռնվագրությունը է տալիս «գտնել» նոր աշխարհայացք, դաստիարակել սոցիալական շուկայական մտածողություն «ազատության և կարգի» շրջանակներում:

7. Stü Eucken W., Grundsätze der Wirtschaftspolitik. Bern, Tübingen. 1952. էջ 254-289:
8. Ванберг В. "Теория порядка" и конституционная экономика. - "Вопросы экономики", 1995, N 12, էջ 87:
9. Նույն տեղում, էջ 89:
10. Röpke W., Die Gesellschaftskrisis der Gegenwart, Zurich, 1942, էջ 310-311:
11. Erhard L., Wohlstand für Alle, Dusseldorf. 1957, էջ 135, 241:
12. Meinhold H. Investivlohn und, Soziale Marktwirtschaft. - օճակ Բրեգեր Է.Յ. էջ 218-219:
13. Stü Վարանդյան Ա., ԴՅ Դաշնակցության պատմություն, հ. 1, Փարիզ, 1932, էջ 487-488:
14. Stü Սարինյան Ռ., Վենտիդր Արախսանյան, Եր., 1980:
15. Лист Ф., Национальная система политической экономии. Пер. с нем. СПб, 1891, էջ 425:
16. Зарянский Б. Е., Людвиг Эрхард: секреты "экономического чуда". М., 1997, էջ 135:
17. Васина Л.Л., Социальное рыночное хозяйство: словарь терминов. М., 1997, էջ 44:
18. Зарянский Б. Е., Людвиг Эрхард: секреты "экономического чуда" էջ 137:
19. Նույն տեղում, էջ 33:
20. Гаджиев К.С., Геополитика Кавказа, М., 2001, էջ 64: